# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքում 2023թ-ի դեկտեմբերի 13-ին կնքված ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/1-1 ծածկագրով գնման պայմանագրում 2024թ-ի մարտի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված աշխատանքները իրականացվում են այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Փոփոխվել է Պայմանագրի գինը և նվազեցվել է Պայմանագրի գումարը 1 890 000 000 (Մեկ միլիարդ ութ հարյուր ինսուն միլիոն) ՀՀ դրամով, այն սահմանվելով 3 402 000 000 (Երեք միլիարդ չորս հարյուր երկու միլիոն) ՀՀ դրամ, նվազեցվել են տպագրության ենթակա դրոշմապիտակների քանակը 500 000 000 հատով:

Փոփոխվել է գնման Պայմանագրի Հավելված N 2-ը՝ աշխատանքի կատարման ժամանակացույցը և հաստատվել է նոր խմբագրությամբ:

Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 7.13 կետի համաձայն Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ (ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 7-ի N 348-Ն որոշում):

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 844-704:

Էլ. փոստ՝ gurgen_ghazaryan@taxcervice.am:

Պատվիրատու՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**

**Համաձայնագիր-1**
**13.12.2023թ. կնքված N ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/1-1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

**ք. Երևան** «27» Մարտի 2024թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ (Պատվիրատու), ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի մի կողմից, և «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Թառոյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 13.12.2023թ. կնքված N ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/1-1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

***Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07 մարտի 2024 թվականի N 348-Ն որոշումը՝

1.1. Փոփոխել Պայմանագրի գինը և նվազեցնել Պայմանագրի գումարը 1 890 000 000 (Մեկ միլիարդ ութ հարյուր ինսուն միլիոն) ՀՀ դրամով, այն սահմանելով 3 402 000 000 (Երեք միլիարդ չորս հարյուր երկու միլիոն) ՀՀ դրամ, նվազեցնելով տպագրության ենթակա դրոշմապիտակների քանակը 500 000 000 հատով:

1.2. Փոփոխել գնման Պայմանագրի Հավելված N 2-ը՝ աշխատանքի կատարման ժամանակացույցը և հաստատել նոր խմբագրությամբ /կցվում է/:

1.3. Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք.Երևան, Բագրևանդի 82 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011474666 | Հ/Հ 2480101710850100 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 01531784 |
| ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝ | «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| Է.Գևորգյան | Ա.Թառոյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
Հաստատված է
«13» դեկտեմբերի 2023թ. կնքված
N ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/1-1 գնման պայմանագրի փոփոխությամբ

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Չափման միավորը | Միավոր գինը ՀՀ դրամ | Ընդհանուր գինը ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | Մատակարարման | |
| | | | | | Հասցեն | Ժամկետը |
| 1 | հատ | 3"78 | 3 402 000 000 | 900 000 000 | Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Արարատյան 90: | Դրոշմապիտակների քանակը և ընդունման ժամանակացույցը<br>2024թ. քանակը՝ 900 000 000 (ինը հարյուր միլիոն) հատ, ընդ որում՝<br>- առնվազն 200,0 մլն.հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում.<br>- առնվազն 200,0 մլն.հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 120 օրացուցային օրվա ընթացքում.<br>- առնվազն 300,0 մլն.հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 140 օրացուցային օրվա ընթացքում.<br>- առնվազն 200,0 մլն.հատ՝ իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 160 օրացուցային օրվա ընթացքում: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474666
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

**Է.Գևորգյան**
______________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ
ք.Երևան, Բագրևանդի 82
«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2480101710850100
ՀՎՀՀ 01531784
«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝

**Ա.Թառոյան**
______________________
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված
Հաստատված է
«13» դեկտեմբերի 2023թ. կնքված
N ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/1-1 գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2024թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը Տարի** |
| 1 | Դրոշմապիտակների տպագրական աշխատանքներ | 4861 | | | 1 407 923 600 | 3 402 000 000 | 3 402 000 000 | 3 402 000 000 | 3 402 000 000 | 3 402 000 000 | 3 402 000 000 | 3 402 000 000 | 3 402 000 000 | 3 402 000 000 | **3 402 000 000** |

*Վճարման գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474666
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

**Է.Գևորգյան**
_______________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ
ք.Երևան, Բագրևանդի 82
«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2480101710850100
ՀՎՀՀ 01531784
«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝

**Ա.Թառոյան**
_______________________
(ստորագրություն)
Կ.Տ